

# ՊԱՏՄԱ-ԲՎԼԱՍԻՒՐԱԿԱՆ

ՄԱՆԵԱ (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆՅԱՆ

Դադումական գիրությունների դոկտոր

## «ՄԱՆԿՈՒՔ» ԵԶՐՆ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածը «Ուխտի մանկունք» և «մանկունք Եկեղեցւոյ» հրապարակման<sup>1</sup> երկրորդ մասն է, որում, ինչպես և խոստացել էինք, ամփոփված են «մանկունք» տերմինի վկայություններն այլալեզու աղբյուրներում և ներկայացված են ուսումնասիրության նախնական եզրականգումները:

Հունական և լատինական երկերում (հիմնականում վաղ քրիստոնեական շրջանի) խնդրո առարկա տերմինը սակավ է վկայված. դրանցից մի քանիսն արդեն մեջբերված են հոդվածի առաջին մասում<sup>2</sup>. Այլալեզու աղբյուրների մերգրավումը կարող է ոչ միայն քննարկվող եզրի և դրանով կազմված բառակապակցությունների ստուգ իմաստը պարզաբնելու, այլև ներքելու համար ասորագետներից շատերի կարծիքն այն մասին, որ ես Q'յամա պրտահայտության ներքո պարփակված գաղափարները հասուկ են միայն վաղ ասորական քրիստոնեությանը:

Նախ՝ կրկին անդրադառնանք Ափրահասի գործին և մեջբերենք այն հատվածները<sup>3</sup>, որոնք դարձել են գիտական բանավեճերի առարկա և արդեն հարյուր տարի է, որ ասորաբանության առաջնային չլուծված խնդիրներից են: Այն հանգամանքը, որ այս երկը առնչվում է «մանուկ» տերմինի հետ, փաստվում է գրվածքի հայերեն թարգմանության վերնագրով, որը պարզորոշ նշված է, որ գիրը հասցեագրված է «մանկանց» «Գիրը, որ կոչի Զօն արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծքին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակա մանկանց նորոյս Սիովմի»: Վերնագրից բացի, մանկունք եզրը Ափրահասի թարգմանությունում հանդիպում է նաև այլ տեղերում.

«Եւ ո՞չ եթէ այս է և շատ. այլ զայս յիմէն լուիշիք առանց հակառակութեան. և եղբարց մերոց մանկանց հաւանութեամբ խելամուս արասցն զնոսա»<sup>4</sup>:

Երկի 6-րդ գլխում սահմանված են bar Q'յամա-լի՝ «ուխտի մանկանց» նկարագիրը և նրանց ուղղված անհրաժեշտ պատզամները, որոնք թվով ավելի են, քան Երգնակցու «Խրատ»-ում.

«Հանդերձեսցուք պաշար օթևանաց մերոց նեղ և նուրբ ճանապարհին: Մերկացուք ի մէնց զաղտեղութիւն, զի զգեցցուք զիանդերձն հարսանեաց: Վարձեսցուք

<sup>1</sup>Մ. Շիրիեան, «Ուխտի մանկունք» և «մանկունք Եկեղեցւոյ», «Էջմիածին», Ը, 2002, լ. 90-110:

<sup>2</sup>Նոյն վնդում, լ. 97, 101-103:

<sup>3</sup>«Զօն» գրքից սպորեն վկայակություն մեջբերումները չեն կրկնում առաջին հոդվածի հարվածները, որոնց սնդուրադրել էինք սղարար:

<sup>4</sup>Գիրը, որ կոչի Զօն արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծքին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակա մանկանց նորոյս Սիովմի: Կոստանդնուպոլիս, 1824, լ. 201 (այսուհետ՝ Ափրահադ-Զօն): Սակայն հաճախ թարգմանիքը օգտագործել է «որդիիք» բառը:

արծաթն, զոր ընկալաք. զի կոչիցիմք ծառալք քաջք և ժիրք: ....Արբեսուր զսիրտս մեր յանօրէնութեան, զի տեսանցեամք զբարձրեալն փառօք իրովք: Եղիցուր ողորմածք որպէս և գրեալ է, զի ողորմեսցի մեզ Աստուած: Եղիցի խաղաղութիւն ի միջի մերում, զի կոչիցիմք եղբարք Քրիստոսի: Եղիցուր քաղցեալք արդարութեան, զի լցոնուր ի սեղանոյ անտի արքայութեանն: Եղիցուր աղ ճշմարտութեան, զի մի լիցցուր կերակուր օծին:....Դիցուր զաղաւարտն լուսոյ. զի մի՝ մեռցուր ի պատերազմի: Պահեսցուր զմէչս մեր ճշմարտութեամք. զի մի՝ լրեալ գտանիցիմք ի պատերազմ»<sup>5</sup>:

Հատվածում ընդգծված բառերն ու բառակապակցություններն արդեն ծանոթ են մեզ Երգնացու խրատից: Երկու գրվածքներում ենրկայացված պատվիրանները համեմատելիս, կարելի է մատնանշել Ե՛լ ավելի ընդհանուր կետեր: Ե՛Վ «Զգոն»-ը, և՝ «Խրատ»-ը հորդուում են «մանկանց» լինել «մաքուր», Ժիր<sup>6</sup>, ողորմած<sup>7</sup> և խաղաղասեր<sup>8</sup>, արի մնալ սատանայի դեմ մղվող պատերազմուն<sup>9</sup>, ընտրել «Անդ և Առոր ճանապարհը»<sup>10</sup>: Դիմելով «ուխտի մանկանց», Ավիրահատը հորդուում է.

«Վարձեսցուր արծաթն, զոր ընկալաք, զի կոչիցիմք ծառալք քաջք և ժիրք»<sup>11</sup>:

«Եղիցուր մշակք ժրագուխք»<sup>12</sup>:

«Ով առնու զմարմին Քրիստոսի, պահեսցէ զմարմին իր անքիծ մաքրութեամբ»<sup>13</sup>: Խակ «մանկանց» խաղաղասիրության, հնազանդության<sup>14</sup>, հնզության, խոնարիության մասին հա գրում է.

«Եղիցի խաղաղութիւն ի միջի մերում, զի կոչիցիմք եղբարք Քրիստոսի»<sup>15</sup>:

«Որ կամի առնել զխաղաղութիւն, լինի նա մի յորդուցն Աստուծոյ»<sup>16</sup>:

«....քանզի Քրիստոս ի հեզու և ի խոնարիս բնակէ»<sup>17</sup>:

Նոյն հատկանիշները վկայված են նաև որոշ հունական աղբյուրներում: Օրիմակ, Կիպրիանուը ևս մատնանշում է մանկանց խաղաղասիրությունը. Խոսքը խարսխելով Հիսուսի խաղաղասիրության վրա:

«Օրիմնեալ են խաղաղասերները, քանզի նրանք պետք է անվանվեն Աստծու որ-

<sup>5</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106-107:

<sup>6</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106, 108, Է. Բաղդասարյան, Հովհաննես Երգնկացին և նրա խրադական արծակը, Երևան, 1977, լ.շ 232 (այսուհենով՝ Հովհ. Երգնկացի, Խրադ):

<sup>7</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106, Հովհ. Երգնկացի, Խրադ, լ.շ 238:

<sup>8</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106, Հովհ. Երգնկացի, Խրադ, լ.շ 237:

<sup>9</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 107-108, նաև զլուխ Ե, լ.շ 81- 105, Հովհ. Երգնկացի, Խրադ, լ.շ 235, 238:

<sup>10</sup> Հովհ. Երգնկացի, Խրադ, լ.շ 236:

<sup>11</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106:

<sup>12</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 108:

<sup>13</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 111:

<sup>14</sup> Հանդիպում է նաև «հենազանդության մանուկներ» արդահայքությունը, վեն, օրինակ, Ա Պետր Ա 14: Հմմդ. Հովհաննես Երգնկացու «Խրադի» 5-րդ հրահանգը, «մանկանց» խաղաղասեր լիննելու մասին (Հովհ. Երգնկացի, Խրադ, լ.շ 237):

<sup>15</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 106:

<sup>16</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 111:

<sup>17</sup> Ավրահար-Զգօն, լ.շ 132:

դիմեր»<sup>18</sup>:

Մաքրության և պարզության մասին է Բարսեղ Կեսարացու Բետկալ հատվածը.

«Աստված շնորհել է մեզ այն, որ մենք մեր բարությամբ նմանվենք Նրա մաքրությանը, որպեսզի գտնենք մեր լիանքի պարզամտությունը և կարողանանք ձեռք բռնի այն հանգիստը, որը շնորհված է նրանց, ովքեր Քրիստոսի մանուկներն են»<sup>19</sup>:

Ի դեպ, Աստծու խոստացած «հանգիստը» «մանկանց» համատեքստում նշվում է նաև Հովհաննես Երգմկացու Բետկալ տողերում.

«Եւ Աստուած զարքայութիւնն յերկինս է խոստացեալ և հանգիստ յափունական, շանա՛ եւ փութացի՛ մտանել յայն հանգիստն»<sup>20</sup>:

Եզրին անդրադարձած Բետինակների մեծամասնության երկերում հոգևորն ու պարզությունը ընդգծված են որպես «մանուկների» կարևորագույն հատկանիշ: Տերտուլիանոսի Բետկալ տողերը, օրինակ, Ավիրված են դրան.

«Եվ Բետո, նոր մանուկներ ծնվեցին, որոնք իրենց արյամք ուխտ էին կնքել Քրիստոսի Բետությունը կասե՞ս, որ «մանուկներն» էին բղավում. «Խաչեցեք Նրան»: Ո՞չ, նրանք ո՞չ «մանուկներ» էին, ո՞չ էլ «երեխաներ», այլ բառերով ասած նրանք պարզամիտ չէին: Չե՞ որ առաջյան էլ հրամայում է մեզ, «մանուկներ դառնալ» Աստծու համեմատ, մեր պարզությամբ լինել «երեխայ չարութիւն գործելու մէջ», սակայն մեր գործելակերպով՝ լինել իմաստուն»<sup>21</sup>:

Ակրահատի երկում «ուխտի մանկանց» ուղղված պատվիրաններում, բազմից արծարծվում է ամուսնության Ըկատմամբ բացասական վերաբերմունքը, ինչը հիմք է հանդիսացել որոշ Բետազուտողների համար նրանց կոսակրոն համարելու.

«Լուր դու սիրելի զոր ես գործ քեզ, որ ինչ վայել է միանձանց ուխտաւորաց կուսանացն սրբոց»<sup>22</sup>:

«Արդ՝ ընթերցիր զայս՝ զոր ինչ գրեցի քեզ. դու և եղարք ուխտաւորք որք սիրեն զկուսութիւն»<sup>23</sup>

«Ո՞վ կուսանք, որ խոստանայք զանձինս ձեր Քրիստոսի. յորժամ մի ոք յուխտաւորք դպրաց ասիցէ ցմի ոք ի ձէնչ, թող բնակեցայց դնդ քեզ, և պաշտեսցես զիս. այսպէս ասաչիր զնա»<sup>24</sup>:

Այս կետը համապատասխանում է Երգմկացու «Խրատ»-ի 6-րդ պատգամին, որը ևս հորդորում է մնալ առանց կնոջ «որչափ կարեն» և «զանձն քո սուրբ պահեա յօսար մեղաց»:

<sup>18</sup> The Writings of Cyprian, Bishop of Carthage, 2 vol (Vols. 8-9 Ante-Nicene Christian Library, Ed. by A. Roberts), 1976 Edinburgh, Clark, 1976. 2 Vols., III, 2 (այսուհետ՝ Cyprian, Testimonies Հովհ. Երգմկացի, Խրատ):

<sup>19</sup> Epist. 5. To Nectarius, Epistolae, ed. Y. Courtonne, Saint Basile. Lettres, 3 vols. Paris: Les Belles Lettres, 1:1957; 2:1961; 3:1966: 1:3-219; 2:1- 218; 3:1-229. Epist. 1-100: vol. 1. Epist. 101-218: vol. 2. Epist. 219-366: vol. 3. (այսուհետ՝ Basilus Caesariensis, Epistolae):

<sup>20</sup> Հովհ. Երգմկացի, Խրատ, լ. 232:

<sup>21</sup> Tertullian, Against Valentinians, Kessinger Publishing, LLC, 2004, ch.II (այսուհետ՝ Tertullian, Against Valentinians):

<sup>22</sup> Ակրահատ-Զգոն, լ. 120:

<sup>23</sup> Ակրահատ-Զգոն, լ. 135:

<sup>24</sup> Ակրահատ-Զգոն, լ. 119:

սակայն նաև ասվում է.

«Եւ թէ կամիս ամուսնանց՝ քեզ արդինաւը և հալալ կին առ արհնութեան պսակով և մի՛ հայիր ցանկութեամբ յատար կին, զի շուն կոչի և ոչ է մարդ, որ յատար կին խառնակի»<sup>25</sup>:

Գրեթե նոյնը կարդում ենք Ավրահանի գրքում.

«Վասա այսորիկ եղբարք ամենայն այր ովատար կամ սուրբ որ սիրէ զմիանձնութիւն. և կամի թէ կին հատատար, իբրև զինքն բնակիլ ընդ նմա, լաւ է նմա կին առնուլ յայտնապէս, քան զշեռնուլ ի ցանկութիւն»<sup>26</sup>:

Եղեսիայի եպիսկոպոս Ռաբուլայի «Հրահանգմեր»-ում ամուսնությունը կարծես թե չի արգելվում, սակայն օտար կամանց հետ մի տամիքի տակ-ապրելը ևս պարսպավում է: Օրինակ՝ երկրորդ հրահանգը միամշամակ զգուշացնում է, որ «և ոչ մեկը վերակացումերից, կամ քահանամերից, կամ սարկավագմերից, կամ էլ «ովատի մանուկմերից» չպետք է քանակի կնոջ հետ նոյն տամիքի տակ, եթե այդ կինը նրանց մայրը, քուրը կամ դուստրը չէ»<sup>27</sup>: Խակ 56-րդ հրահանգը զգուշացնում է.

«Ոչ որ չպետք է լրի իր կնոշը, եթե նա չի մեղադրվել ամուսնական անհավատարմության մեջ, ինչպես և, ոչ մի կին չպետք է լրի իր ամուսնուն տարրեր պատճառ մերով»<sup>28</sup>.

Այսինքն՝ եթե «մանկանց»-ն ուղղված հրահանգմերում քննարկվում են ամուսնությանը վերաբերող հարցեր, ապա նշանակում է, որ ամուսնության գաղափարը բացառված չէր նրանց համար:

Պարզ է, որ վաղ շրջանի քրիստոնեության հեղինակմերից շատերն են անդրադարձել ամուսնության և կուսակրոնության խնդրին, որն այդ շրջանի կարևորագույն հարցերից մեկն էր: 2-րդ դարից մեզ են հասել տեղեկություններ, որոնց համաձայն՝ «մանուկմերը» պետք է լինեն մաքուր ոգով և մարմնով ու գերծ մնային ամուսնությունից: Օրինակ՝ Հուստինոս Վկան գրում է.

«Հարության, Աստծու մանուկմերը, չպետք է ամուսնանան կամ ամուսնության տրվեն, բայց պետք է լինեն հրեշտակմերին հավասար»<sup>29</sup>:

3-րդ դարի հեղինակ Կիպրիանոսը, կրկնելով Հուստինոս Վկանի խոսքը, հայտարարում է. «Աստծու խոսքն է, որ ասում է. «Այս աշխարհի մանուկմերը ծնում են և ծնվում են, սակայն նրանք, ովքեր արժանի են համարվում այն աշխարհին և հարությանը մեռնելուց հետո, չպետք է ամուսնանան կամ ամուսնության տրվեն, նրանք չեն մահանա երբեկցեն, քանզի հավասար են Աստծու հրեշտակմերին, լինելով հարու-

<sup>25</sup> Հովի. Երգնեկացի, Խորար, էջ 238:

<sup>26</sup> Ավրահանի-Զօն, էջ 114:

<sup>27</sup> A. Vööbus, Syriac and Arabic Documents, I (CSCO 184, subs. 14), Stockholm 1960, p. 36 (այսուհետև՝ Վööbus, 1960):

<sup>28</sup> Vööbus, 1960, p. 49, հմմք. Խակ 57-րդ հրահանգը, որ նշվում է, որ «ոչ որ չպետք է ամուսնանա իր քրոջ կամ նորոյ աղջկա հնոր, կամ էլ մոր կամ հորդրոյ հնոր»:

<sup>29</sup> Justinus Martyr, Dialogus cum Tryphone, ed. E.J. Goodspeed, Die ältesten Apologeten. Gottingen: Vandenhoeck & Ruprecht, 1915, LXXXI (այսուհետև՝ Justin Martyr, Dialogus): Հարության մանուկմերի մասին կխոսնեն սպորթ: Անելք միայն, որ այսուղի «հարություն» բառը Քրիստոնին չի վերաբերում:

**թյան մանկունք»:** Այս, ինչ մենք պետք է դառնանք, դուք արդեն ակսել եք դառնալ. այս աշխարհում, դուք արդեն տիրացել եք հարության փառքին: Դուք ապրում եք այս աշխարհում զերծ աշխարհի վնասակար ազդեցությունից, մնալով մաքրաբարու և կույս. դուք, որ հարության մանուկներն եք, հավասար եք Աստծու հրեշտակներին»<sup>30</sup>:

4-րդ դարում, տասը պատվիրանները քննարկելիս, Կյուրեն Երուսաղեմացին արծարծում է այդ խնդիրը, սակայն չի նշում ստուգ հասցեատիրոջը. հարցն էլ այդքան խիստ չէ դրված «զամուսնութիւնն օրինօք»-ը թուլատրվում է.

«Դարձեալ հայեաց, գուց ունել ունիցիս զուստ պարկեշտութեան, և հապատացեալ ամրարիաւաճիցես ի վերայ ամուսնացելոց յաշխարիի: «Զի պատուական են հարսանիք, և սուրբ են անկողինք», ասէ առաքեալ: Ել դու, որ զարբութիւնդ ունիս ի սկզբանէ, ոչ յամուսնացելոց ծնեալ ես, և մի դու, եթէ զոսկիս ստացուած ստացեալ ես, զարծարն խոտան համարիցիս. այլ մնձալոյս լինիցին, որ զամուսնութիւնն օրինօք յանձինս բերեն, որ զամուսնութիւնն օրինօք, և ոչ եթէ լկտութեամբ վասն անշափ շնութեանն վարիցեն»<sup>31</sup>:

Համապատասխան հունարեն տեքստում զամց է առնվում «ուկաս» բառը և «ուկստ պարկեշտութեան» բառակապակցության փոխարեն օգտագործվում է միայն «τὴν σωφροσύνην»<sup>32</sup>-ը («ողջախորհություն», «պարկեշտություն»):

Այս առումնվ հետաքրքրական է Եզնիկ Կողբացու գրիվածքի հետևյալ հատվածը.

«Նա՛, եւ կուսանք սրբոյ Եկեղեցոյ ոչ վասն այնորիկ պահեն զկուսութիւն, եթէ զամուսնութիւն տուեալ յԱստուածոյ պղծութիւն համարիցին որպէս Մարկիոնն եւ Մանի եւ մծունեայք, զի եթէ յայն միտս ուկստատրէին, ապա եւ կուսութիւնն չէր յանգարի կուսութեան. այլ վասն առաւել սիրելոյ զԱստուած ի բարոք արարածոց Աստուածոյ հրաժարեն, զի նմանեալը հրեշտակաց Աստուածոյ, ուր ո՞չ արուն է, եւ ո՞չ էզ»<sup>33</sup>, ցուցանիցեն եւ յերկրի զնոյն առաքինութիւն ըստ այնմ, թե «Ե՞ս ներքինիք, որ զանձինս իրեանց արարին ներքինիս վասն արքայութեանն երկնից» լինել ի յարութեանն «հաւասար իրեշտակաց»<sup>34</sup>:

Հնարավոր է, որ «կուսանք սրբոյ Եկեղեցոյ»-ն նույն «մանկունք Եկեղեցոյ»-ն են, քանզի

<sup>30</sup> The Treatises of S. Caecilius Cyprian Bishop of Carthage and Martyr, John Henry Parker 1840, II. On the Dress of Virgins, 22 (այսուհետ՝ Cyprian, Treatises): հմտք. նաև Cyprian, Testimonies III, 32, որ կրկնվում է: նոյն միջքը (նոյնպես հարության մանուկների մասին), վկայակրնելով Ղոկասին:

<sup>31</sup> Երանելոյն Կիրիլի Երուսաղեմայ Հայրապնպի Կոչումն Ընծայութեան, Վինենա, 1832, էջ 63 (այսուհետ՝ Կոլումբ Երուսաղեմացի, Կոչումն):

<sup>32</sup> St. Cyril of Jerusalem, Catecheses, P.G. XXXIII, Cathechesis IV, p. 488 (այսուհետ՝ Cyril of Jerusalem, Cathechesis):

<sup>33</sup> Հմտք. այս հարվածը Կոլումբ Ալեքսանդրացու կրկի I.6.31.2, (Clemens Alexandrinus, Paedagogus, ed. H.-I. Marrou, M. Harl, C. Mondesert and C. Matray, Clement d'Alexandrie. Le pedagogue, 3 vols. [Sources chretiennes 70, 108, 158. Paris: Cerf, 1:1960; 2:1965; 3:1970], այսուհետ՝ Clemens Alexandrinus, Paedagogus) օվկ չեւ ձրսեւ և թիլնչ վերը մշքրեված բողոքի հետ:

<sup>34</sup> Եզնիկ Կողբացի, ճառք ըստով աղանդոց, աշխատահրութեամբ Մ. Մինասեանի, Ժն 1992, էջ 112 (այսուհետ՝ Եզնիկ Կողբացի, 1992):

Եկեղեցու կովսերին հեղինակի տրված բնութագիրը համարունչ է «մանկանց» նկարագրին: Ընդհանրապես, պարզ տեսանելի է, որ Եղիշկ Կողբացու «Եղի աղանդոց»-ը պատկանում է քննարկվող երկրի համատեքստին, ինչը օգնում է լավագույն հասկանալու կողբացու ուշագրավ և դժվար ընկալելի գործը, քանզի գրվածքի բառամթերքը յուրահատուկ է, և շատ տերմինները ունեն ուրուվն, այլուր չհանդիպող ձևեր:

Ուշագրավ է, որ ամուսնության և կուսակրոնության հարցերը քննարկելին, վաղ շրջադի հեղինակները Ափրահատի և Երգմկացու նման դրամք հասցեազում են «մանկունք»-ին, այլ ոչ թե քրիստոնյաներին ընդհանրապես, ինչը առկա է Աստվածաշնչում և Կյուրեղ Երոսաղենացու երկում, և ոչ էլ Եկեղեցականներին, ինչը հատուկ է Եկեղեցական կանոններին<sup>35</sup>:

Արդեն իսկ առաջին հոդվածից և այստեղ բերված օրինակներից պարզ է դառնում, որ «մանուկ» եզրը Ափրահատի գրվածքից ավելի վաղ է վկայված: Այս հեղինակների երկերում «մանուկ» և խնդրո առարկա այլ տերմիններն ավելի ստուգ են սահմանված: Հօգուտ առաջարկվող ենթադրության, թե հիշատակված տերմինները հատուկ չեն միայն ասորական քրիստոնեությանը, Ալատենը հետևյալը:

Նաև, հարկ է նշել, որ «մանկունք» եզրը պարունակում է երրայական ավանդության հետքեր, որոնք տեսանելի են դառնում հատկապես Քումրանի համայնքի վերաբերյալ մեզ հասած տվյալների հետ համեմատություն անցկացնելիս: Այս փաստը արծարծված է որոշ մասնագետների կողմից<sup>36</sup>: Ամրողջացներով այդ տեսակետը, կարելի է ևս մեկ գուգակու առաջարկել: Ի. Ամուսինն ընդգծում է, որ Քումրանի համայնքի անդամները կոչվում էին թ՛յմ<sup>37</sup>: Բայի սկզբնական իմաստն է «Բիմար, տիա», սակայն այն նաև «մանուկ» կամ «փոքր» է նշանակում<sup>38</sup>: Ի. Ամուսինը նշում է այդ տերմինի հետագա հավաճական զարգացումը նոր Կտակարանում, որ այն արտահայտված է «մանկունք» իմաստն ունեցող (մուկրու, ձկակու, նήπιու) բառերով<sup>39</sup>: Այս առումով, բարը կարելի է բաղդատել Կղեմես Աղեքսանդրացու հետևյալ հատվածում օգտագործված եզրի հետ.

«Սակայն եթե Օրանք մեզ՝ «մանկության» հետևորդներին, անվանում են Բիմարներ, տեսեք, թե Օրանք ինչպես են հայթոյում Տիրոջը՝ Բիմար անվանելով Օրանց, ովքեր նվիրվել են Աստծուն»<sup>40</sup>.

Ավելին, թվում է, որ «մանուկ» տերմինի համատեքստն ունի նաև այլ ընդհանրություններ՝

<sup>35</sup> Այս և նշված ընդհանրությունների պարբառով համոզիչ չի թվում հետքագործների առաջ բաշած հայ և ասորի ուսիրավորներին տարրերակող դրույթը, ըստ որի Վլրջիններս իրավունք չունին ամուսնապու, ի հակառություն հայ ուսիրավորների (Տ. Պ. Լ. Զերիյան. Եղիշեի կրկը որպես վաղ հայկական նկնենցու նկնենցարանության վկայություն, Էջմիածին (Ա) 1990, էջ 40-49, էջ 47, այսուհետև Զերիյան, 1990):

<sup>36</sup> A. Vööbus, Celibacy, A Requirement for Admission to Baptism in the Early Syriac Church, Stockholm 1951, p. 97-101. R. Murray, Symbols of Church and Kingdom, Cambridge 1975, p. 15-17 (այսուհետև՝ Murray, 1975):

<sup>37</sup> И.Д. Амусин, Кумранская община, Москва, 1983, с. 107-117 (այսուհետև՝ Амусин, 1983), հագրկապես էջ 115: Նշնոր, որ Ի. Ամուսինի մենապությունը նվիրված է բացառապես Քումրանի համայնքին, որքին ոչ մի զուգական չեն անցկացվում քննարկվող եզրների հետ:

<sup>38</sup> Амусин, 1983, с. 107.

<sup>39</sup> Амусин, 1983, сс. 107-117.

<sup>40</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I, 5.

«Քումրանի համայնքի մասին տվյալների թեստ. համայնքով ապրելու գաղափարը, «մանկուատագ»-ի առկայությունը, զիտության և իմաստության հանդեպ ունեցած վերաբերմունքը, ինչպես նաև «պատերազմ» ու «ճշմարտություն» հասկացությունների ընկալում<sup>41</sup>:

Երրորդ կովանը, որ «մանկունք» տերմինը հատուկ չէ միայն ասորական քրիստոնեությանը, այն փաստն է, որ եզրը վկայված է Աստվածաշնչում:

Երրորդ և, թերեւս, ամենակարևոր հանգամանքը եզրի վկայված լինելն է հունական և լատինական աղբյուրներում դեռևս Ափրահատից առաջ: Այս դրույթը վճռորոշ է, քանզի դա ոչ թե տերմինի առկայության կամ բացակայության խնդիր է, այլ, ինչպես կտեսնենք ստորև, եզրը սերտորեն առնչվում է քրիստոնեության ձևավորման շրջանի հիմնական թեմաներին:

Հունական և լատինական աղբյուրներում խնդրու առարկա եզրը երբեմն, կարծես, քողարկված է ելեկտրական բառով: Որոշ բանգրերում «մանկունք» տերմինը հիմնականում հանդիպում է հաղորդության, մկրտության, նախահաղորդության (կոնֆիդենցիալի) խնդիրների շուրջ խոսելիս: Այդ աղբյուրները վկայում են, որ ճշմարիտ հաղորդությունը տեղի էր ունենաւ Զատկի Պատարագի ժամանակ, երբ նորահավատները, այլևս չլինելով «երախալ», առաջին անգամ էին մասնակցում Պատարագին: Սակայն, մինչև Զատկին հաջորդող կիրակին, օրանք համարվում էին «մանուկներ» և ստանում հրահանգներ, հատկապես քրիստոնեական խորհուրդների վերաբերյալ: Վերջապես, Զատկին հաջորդող առաջին կիրակի օրը Պատարագը սկսվում էր «Ճոր ծնված մանուկների մասին» (Ա. Պետ. Բ 2) հայտարարությամբ: Այդ ժամանակ էր, որ «մանուկները» հանում էին իրենց սպիտակ զգեստը և համարվում կանոնալ հավատացյալներ<sup>42</sup>: Հովհան Ուկերերանի «Հրահանգներ մկրտվելու պատրաստվողներին («երախալ»-ներին)» գրվածքում պարզորոշ նշված է, որ «մանկանք» ճշմարիտ հաղորդությունը պետք է կատարվի իրենց այդ ժամանակ.

«Սկզբում ցանկանում եմ պարզաբանել, թե ինչու էր մեր հայրերի երկրում որոշված, որ Եկեղեցու մանուկները տարվա ընթացքում հենց այդ ժամանակ պետք է հաղորդություն ստանան. և ինչն էր պատճառը, որ հրահանգներ ստանալուց հետո, օրանք հանելով իրենց կոշիկները և զգեստը, մերկ ու բոկոտն, միայն մեկ հանդերձով առաջնորդվում էին լսելու դևահանների խոսքը: Քանզի և՛ հանդերձը, և՛ տարվա ժամանակը չմտածված և հապճեպ որոշումներ չեին, այլ երկուսն եւ ունեին որոշակի խորհուրդ և գաղտնի պատճառ»<sup>43</sup>:

Ընդգծենք, որ Հովհան Ուկերերանը այստեղ խոսում է ոչ թե պարզապես մանուկների, այլ «Եկեղեցու մանկանց» մասին: Նոր մկրտվողներին հորդորելով հետազյում հետևելու բոլոր հրահանգներին և ջամալու հասկանալ խորհուրդները, նա ասում է, որ այդ դեպքում

<sup>41</sup> Հմնիր. Ամսան, 1983, cc. 107-117:

<sup>42</sup> St. Justin, *Apologia I*, MPG, VI , I in P.G. VI, 328 sqq. (այսուհետև՝ Justin Martyr, Apol.), Tertullian, *De Baptismo*, P.L. I, 1197 sqq.; St. Cyril of Jerusalem, *Catecheses*, P.G. XXXIII, 369, sqq.; St. Augustine, *De Catech. Rudibus*, PL, XL, 309. Cf., e. g. Cyril of Jerusalem, *Lecture III. On Baptism*, Romans vi. 3, 4, հմմդ. Խաչիկ Ֆոնկ, *Didache*, Tuebingen , 1887:

<sup>43</sup> Joannes Chrysostomus, *Ad illuminandos catecheses 1-2 series prima et secunda*, MPG 49, 223-240 (այսուհետև՝ Joannes Chrysostomus, *Ad illuminandos*):

Արանք կկարողանան լինել ոչ միայն Քրիստոսի «եղբայրներ», այլև նրա «մանուկները»<sup>44</sup>: Այսպիսով, նաև «եղբայրներից», կարծես, ավելի բարձր է դասում «մանուկներին»: Ուշագրավ է, որ Ուկերերանն իր ճամակներից մեկում հասցեազրված ժուժկաների մի առաջնորդի (ինչը երևում է վերնազրից), յուրաքանչյուր երկրորդ նախադասությունը սկսում է «Խնդրում են ձեզ իմ մանկունք» բանաձևով<sup>45</sup>:

Սուաշին Բողվածում նշվեց, որ Կղեմես Աղեքսանդրացու «Մանկավարժ»<sup>46</sup> երկը պարունակում է «մանուկ» եզրին Ավիրված հասուկ գլուխներ, որոնք բավականին ծավալուն են մեշքերման համար: Կանգ առնենք միայն որոշ դրույթների վրա.

«Մենք մանուկներ (պահես) ենք: Բազում տեղերում Սուրբ Գիրքը փառաբանում և նկարագրում է մեզ, օգտագործելով զանազան փոխարերություններ, զանազան անուններ տալով մեր հավատի պարզությանը... Ըստ Ավետարանի, ծովափին կանգնած Տերը դիմում է ձկնորսությամբ գրադադարի իր աշակերտներին և բարձրաձայն հարցնում. «Մանուկներ, որկիցե՞ս միս ունեք:» (պահճա, մή ու ծփու չի պահանջեն): Նա փաստորեն մանուկներ է անվանում Արանց, ովքեր արդեն աշակերտների կարգավիճակում էին: Նաև ասված է, որ «Արանք բերեցին Նրա մոտ մանուկներին, որպեսզի Նա իր աջը դժի ճրանց գլխին և օրինի, և երբ Նրա աշակերտները խանգարում էին Արանց, Հիսուսն ասաց. «Թոյլ տուր մանկուոյ և մի՛ արգելուր գրտսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»<sup>47</sup>: Այս արտահայտության իմաստը Տերն ինքն է բացատրում, ասելով. «Մինչև դուք դարձի չգաք և չնմանվեք փոքր մանուկներին, դուք չեք մտնի երկնքի արքայությունը»: Նա ասում է դա ոչ թե այն տեղում, որ փոխարերական իմաստով խոսում է մեր վերածնվելու մասին, այլ այսուեղ, որտեղ մեզ ներկայացնում է փաստեր, որ մենք պետք է ընդօրինակենք մանկանց հասուկ պարզությունը»<sup>48</sup>:

«Մանուկների» մասին խոսելիս, Կղեմես Աղեքսանդրացին օգտագործում է հոգնակի թվի առաջին դեմքը: Նա հավաստիացնում է, որ այս գաղափարներն առկա են ոչ միայն Ավետարանում, այլև մարգարեների կանխասացություններում<sup>49</sup>: Փաստորեն, այս թեղինակը, Երզնկացու նման, վկայում է, որ «մանկունք» եզրը ծագում է Աստվածաշնչից: Կղեմեսը պարզաբանում է նաև Աստծո ակնարկն այն մասին, թե «մանուկները» գառնուկներ են բնությամբ և ոչ հասուն մարդիկ, քանի որ ունեն պարզություն և նրբություն (այսինքն՝ անմեղ են): Աթա թե ինչու Աստված դիմում է մեզ բազմաթիվ փաղաքական և այլարանական անուններով<sup>50</sup>: Կղեմես Աղեքսանդրացին հատակորեն նշում է նաև, որ տարիքի կամ

<sup>44</sup> Joannes Chrysostomus, Ad illuminandos, II, 2.

<sup>45</sup> Joannes Chrysostomus, Epistula ad abbatem [Sp.], ed. P.G. Nicolopoulos, Athens: Tsiveriotis, 1973, 421 (այսինքն՝ Joannes Chrysostomus, Epistula ad abbatem):

<sup>46</sup> Թերևս պատրիարքն էլ այսինք նաև «Մանկավարժ» խորագիրը:

<sup>47</sup> Մագր. Ժ-Թ 14:

<sup>48</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.12.1- 1.5.12.4.

<sup>49</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.12.5; I.5.15.4. Նա մնջընում է Դավթի («Օրինացեք, մանկունք, զՏիք, և օրինացեք զանոն Տիւան» (Սղմ. Ճ-Թ 1)) և Եսայու խոսքնը («Անապահի ևս ևս մանկունք իմ, զոր սով իմ Ասպուած» (Եսայի Հ 18)):

<sup>50</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.14.5-I.5.15.1. -«Նա անվանում է մեզ մանուկներ, իսկ երբեմն կ

հասկացողությամ ու զիտելիքների ասիմանափակության պատճառով չէ, որ օգտագործված է «մանկունք» անվանումը, ինչպես կարծում են ոմանք: Ընդհակառակը, ասվում է, որ առանց ուսումի որևէ մենք չի կարող մոտաք գործել երկնային արքայություն, և հավելվում է.

«Եթե մենք մի Ուսուցիչ (ծննդակալ) ունենք երկնքում, ինչպես ասում է Սովոր Գիրքը, ապա, ըստ ընդհանուր համաձայնության, Արանք, ովքեր երկրի վրա են, իրավացիորեն պետք է կոչվեն աշակերտներ: Քանզի ճշմարիտ է, որ կատարելությունն Աստծուն է, որը հավերժ ուսուցանում է, իսկ մամկանն (ծ պատմություն) ու մանուկը (միջուն) մեզ՝ հավերժ ուսանողներին է վերաբերում»<sup>51</sup>:

Կղեմեալ կանգ է առնում հունարեն նήπιուն և նήπիոս բառերի ստուգաբանության վրա: Նշենով, որ սխալ է դրանք հասկանալ «հիմարություն» կամ «տիմարություն» իմաստով, քանզի այդ իմաստն ունի մոդուլար նույնականությունը, նա համարում է, որ նήπիոս-ը պետք է կապել նույնականությունը բարեկարգության հետ, որը բնութագրում է հեզ և խոնարի մեկին<sup>52</sup>: Զարգացնելով այդ թեման, նա գոյում է.

«Եվ եթե Արանք «մանկունք» անվանումը հասկանում են որպես «պարզ անձինք», որը և բարի ճիշտ իմաստն է, մենք փառաբանում ենք Արանց: Քանզի նոր գլուխերը, որոնք նոր իմաստուններն են և կյանքի են կոչվել ըստ նոր ուսուի, մանկամիտ են հիմարության համեմատ»<sup>53</sup>:

«Մանկավարժ»-ի հեղինակը բացատրում է, որ կատարյալ «մանուկ»-ը հենց Ինքն Աստվածն է, և մենք, ստեղծվելով Նրա նմանությամբ, պետք է «մանուկներ» կոչվենք: 6-րդ գլխում Կղեմես Աղեքսանդրացին էլ ավելի է մանրամասնում, թե ովքեր են «մանուկները», կրկին ընդգծելով, որ թերի զիտելիքների կամ կրթության պատճառով չէ, որ Արանք այդպես են կոչվում.

«Իսկովն մեր վերաբնվելուց հետո մենք ձեռք բերեցինք կատարելություն, որից հետո մենք ոգեշնչվեցինք: Քանզի մենք լուսավորվել ենք, ինչը նշանակում է, ճանաչել Աստծուն: Իսկ առ, ով ճանաչում է (զիտե) կատարյալին, չի կարող թերի լինել:... Մկրտվելով՝ լուսավորվեցինք, լուսավորվելով՝ որդիացանք, որդիանալով՝ կատարյալ դարձանք, և կատարյալ դառնալով՝ անմահացանք»<sup>54</sup>:

Կղեմեալ Շշում է, որ «մինչև Հավատքին դառնալը մենք ապրում էինք Օրենքի կանոններով և միայն Հիսուս Քրիստոսին հավատալու և մկրտվելու միջոցով մենք դարձանք Աստծու մանուկներ»: Տարանջատելով «մանուկ» բարի Անրոք քողարկված հին հասկացողությունը նորից, առ հայտնում է, որ Վերջինս պարզորոշ արտահայտված է Պողոս առաքյալի «Առ Կորնթացիս» Ա. թղթում, ուր ասվում է.

«Եղարք, մի լինիք տղայք մտօք, այլ ի չարեաց տղայացարուք, և մտօք կատարածագունքը, ևս երեխաներ կամ որդիներ, ինչպես ևս ևս երիբասարդ ժողովուրդ» կամ «եսոր ժողովուրդ»:

«Իմ ծառաները պնդր է կոչվեն նոր անվամբ», ասում է: Նա, նոր անվամբ, որը կայգառ (Ժիր) է ու հավերժական, մարու և պարզ, մանկական ու ճշմարիկ, և այդ անունը պնդր է օրինված լինի աշխարհում»:

<sup>51</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.17.3-I.5.18.1.

<sup>52</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.19.1- I.5.19.2.

<sup>53</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.20.1-I.5.20.2.

<sup>54</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.6.25.1, I.6.26.1:

եալը լիմիջիք»<sup>55</sup>:

Կղեմեն Աղեքսանդրացին անդրադառնում է նաև Պողոսի նույն թղթի մեկ այլ հատվածին, որը առաջալը «մանուկ» եզրի վերաբերյալ բացասական կարծիք է հայտնում<sup>56</sup>: Մեջբերեալը այդ տողերը:

«Մինչ տղայն էի, իբրև գտղայ խօսէի, իբրև գտղայ խորհի, իբրև գտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր, գտղայութեան ի բաց խափանեցի»<sup>57</sup>:

Ստուգվում է հակասություն. Պողոս առաջալը, որը իր թղթերում արդեն դրական կարծիք էր արտահայտել «մանկունք»-ի վերաբերյալ, այսուեղ հակառակ տեսակետ է հայտնում: Կղեմեն Աղեքսանդրացին շամում է բացատրել, որ առաջալն ըկատի ունի այն ժամանակը, երբ նա ապրել է Օթենքի համաձայն և ծագումով հրեան է եղել: Բարդ և խճճված մեկնարարանություններից հետո նա հանգում է այն եզրակացության, որ նախկինում հրեաներն էլ են կոչվել մանուկներ<sup>58</sup>, սակայն տարբերվել են այս նոր, հոգեոր մանուկներից և, «մանկություն»-ը ի Քրիստոս, Օթենքի «մանկության» համեմատությամբ, «հասունություն» է հաշանակում<sup>59</sup>: Այլ հեղինակներ նույնական հաղորդում են, որ հրեաները մանուկներ են կոչվել, ինչը չի կարելի շփոթել Աստծու մանկանց հետ: Օրինակ՝ Տերտուլիանոսը «Ընդդեմ Մարկիանոսի» 5-րդ գրքում ասում է.

«Դրա համար նա (առաջալը - Մ. Ծ.) ասում է. «Մենք էլ էինք բարկության «մանուկներ»<sup>60</sup>, սակայն «բնությամբ»: Եվ աղամդավորները թող չկիճեն. քանզի հրեաներին Արարիչն անվանեց մանուկներ, ուրեմն Արարիչը բարկության տերն է: Քանզի, երբ ասում է. «Մենք բնությամբ բարկության մանուկներ էինք», ըկատի ունի, որ հրեաները Արարչի մանուկները չեն բնությամբ, «այլ այդպիսին էին իրենց հայրերի ընտրությամբ: Նա (առաջալը - Մ. Ծ.) դա ասում է բնությամբ բարկության մանուկներ նրանց լինելու վերաբերյալ, այլ ոչ թե Աստծու: Այդ պատճառով վերջում նա ավելացնում է «ուրիշների նման», որոնք, իհարկե, Աստծու մանուկներ չեն»:<sup>61</sup>

«Մանկունք»-ի ըկատմամբ «Առ Կորնթացիս» թղթի բացասական վերաբերմունքը նկատվում է նաև մեկ դար անց Արքելայոսի գրքում. նա քննարկում է նոյն հատվածը և տալիս իր մեկնարանությունները.

«Երբ մեկը մանուկ է, նա մտածում և խոսում է մանկան պես, բայց երբ նա դառ-

<sup>55</sup> Ա Կորնթ. ԺԴ 20:

<sup>56</sup> Այս մասին արդեն խոսվել է առաջին հոդվածում և նշվել մեկ այլ օրինակ, որին առաջալը բացասական վերաբերմունք է եղած արդարացուի կողմէ ցուցաբերելու խնդրու առարկա եզրի նկարմամբ:

<sup>57</sup> Ա Կորնթ. ԺԳ 11:

<sup>58</sup> Գրիգոր Խոյսին հաղորդում է Կիպրիանոսը (հմմկ., Cyprian, Treatises, IV, 13). «Սակայն «քազավորության մանուկները պետք է ներկվեն արդարին մթության մեջ, նրանք պետք է լան և կրծքացնեն արտամներ»: Դրանով Նա (Անդրկած - Մ.Ծ.) ցոյց է տալիս, որ հրեաները նախկինում, բանի դեռ Ասպծու մանուկներ լին, մնում էին «քազավորության մանուկներ»:

<sup>59</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.6.34.2.

<sup>60</sup> Հմմկ. Եփին. Բ 3, «և էալ արդարն որդիք բարկութեան իբրև այլը»:

<sup>61</sup> Tertullian, Adversus Marcionem, ed. C. Moreschini, Milano, Varese, V, ch. XVII, p. 466 (այսուհետք՝ Tertullian, Adversus Marcionem):

նում է չափահաս մարդ, «մանկական»-ը պետք է մի կողմ դնի. այլ կերպ ասած, երբ մեկն առաջ է գնում, նա մոռանում է ետևում թողածը: Ուստի և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, երբ զբաղված էր ուսուցանելով և բուժելով մարդկային ցեղը, որպեսզի այն վերջնականապես չկործանվի, և երբ նրա բոլոր ումբնիրների միտքը հետաքրքրված էր նրա գաղափարներով, տեղի ունեցավ լիովին անպատճի մի ընդհատում, քանզի ժամանեց սուրբանդակը և նրան ամփոփեց իր մոր և եղբայրների հիշողության մեջ»<sup>62</sup>:

Հատվածի վերջին տողերը խրթին են, բայց կարելի է ենթադրել հետևյալը. «մանուկներ» գոյություն ունեին Քրիստոսի կենդանության օրոք, սակայն երբ նա համբարձվեց և մնաց իր մոր և աշակերտների հիշողության մեջ, «մանկության» շրջանը մոռացույթյան մատնըվեց: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ, ըստ Արքեպայոսի և Կղեմես Աղեքսանդրացու, «մանուկներ»-ը վաղ շրջանի դեռևս մեծամասնություն չկազմող քրիստոնյաներն էին: Հավանաբար, նրանք ապրում էին համալեթներով, համաձայն հաստուկ օրենքների: Ըստ Կղեմեսի, նրանք պետք է մկրտված լինեին: Վերջին եզրակացությունն ամրապնդվում է Պապիասի երկի պատառիկների հրատարակության մեջ առկա հետևյալ պարզորոշ Ձշումով.

«[Վաղ շրջանի քրիստոնյաներն] անվանում էին «մանկունք» նրանց, ովքեր առաջնորդվում էին բարեպաշտ պարզամտությամբ, ինչպես ուասիմանված է Պապիասի «Տիրոց Բացատրություններ»-ի առաջին գրքում և Կղեմես Աղեքսանդրացու «Մանկավարժ»-ում»<sup>63</sup>:

Սուրբ Գրքում բազմից վկայված «ուխտի մանկունք» արտահայտությունը վերաբերում է հուղարկանությունից սերող մի ավանդության, ըստ որի մարդիկ ուխտ կնքեցին Աստծու հետ: Տարբերակվում է մի քանի ուխտ, որոնք լավագույնս նկարագրված են «Զօն» գրքում.

«Յամենայնի փոխեցան եւ անցին ուխտ եւ օրէնք: Քանզի յառաջազոյն փոխեցաց Աստուած զոխտ Աղամայ. եւ ետ միւս եւս այլ՝ նոյի: Եւ ետ դարձեալ եւ Աբրահամու, եւ փոխեցաց զԱբրահամում՝ եւ ետ միւս եւս այլ՝ Մովսիսի: Իբր ո՞չ պահեցան, ետ միւս եւս այլ ի միւտում դարու ուխտ անխափան եւ անփոփոխ եւ անվախճան: Ուխտ Աղամայ՝ զի մի՞ կերից ի ծառոյ անտի: Խսկ նոյի ուխտ ազ[ել]եղան (այսպէս յօրինակին - Մ.Ծ.) յամս: Ուխտ Աբրահամու՝ զի վասն հաստոյն իւրոյ ընտրեաց զնա յառաջազոյն, եւ ապա յետ ալսորիկ ուխտ թլփատութեան՝ կնիք եւ նշան զաւակի նորա: Եւ Մովսիսի՝ Գառն զատկի ժողովրդեան: Եւ ամենայն ուխտք ոչ նմանին միմեանց: Այլ թլփատութիւն յորում կամեցաւ, ետ զնա ուխտ եւ նշան. նոյն ինքն է՝ զոր ասաց Երեմիա, թե թլփատեցէք զամթլփատութիւն սրտից ձերոց... Եւ իբրև ո՞չ պահեցին զօրէնս ուխտիքն հանդերձ, խափանեցան: Խոստացաւ տալ նմա զԿտակարանս. եւ ասաց՝ թէ ո՞չ իբրև զառաջինն. իբրև մի խսկ

<sup>62</sup> Archelaus. The Acts of the Disputation with the Heresiarch Manes, Testimonia, ed. H. Diels and W. Kranz, Die Fragmente der Vorsokratiker, vol. 2, 6th edn. Berlin: Weidmann, 1952 repr. Dublin, 1966, chap. 48 (այսուհետ՝ Archelaus. The Acts):

<sup>63</sup> Papias, Fragmenta, ed. K. Bihlmeyer and W. Schneemelcher post F. X. Funk, Die apostolischen Vater, 3rd edn. Tübingen: Mohr, 1970 (այսուհետ՝ Papias, Fragmenta):

Է տուող երկոցունց: Եւ այս են Կտակարանքն՝ զոր խոստացամ տալ. թէ ամենեք եամ ծամիցեն զիս ի փոքրկանց մինչեւ յերիցունս, և յայս Կտակարանիս չի՞ք թշկասութիւն մարմնոյ. եւ կմիջ ճշան է ի ժողովրդեան»<sup>64</sup>:

Քրիստոնյամերի համար կարևորագույնը վերջին ովան էր, որը, ըստ ավանդության և աղբյուրների, կնքվել էր Քրիստոսի մարմնով գալստյան ժամանակ.

«Սկզբուն թին մարդիկ ունեն Հին ուխտը, և Օրենքը վախի միջոցով մարդկանց կարգապահության էր վարժեցնում: Եվ Բանը հրեշտակ էր. մաքուր և նոր մարդկանց ևս տրվեց մի նոր ուխտ, և Բանը հայտնվեց, ու վախը փոխարինվեց սիրով, քանզի ծնվեց խորհրդավոր հրեշտակը՝ Հիսուս»<sup>65</sup>:

Կարևոր էր նաև Արքահամի ովան Աստծու հետ, որից մետու հավատացյալները կոչվեցին «Արքահամի մանուկներ» կամ «հավատի մանուկներ: Այդպես է անվանում նրանց Հուատինոս Վկան»<sup>66</sup>: Խոկ Տերտովյանոսը գրում է:

«Եվ երբ նա (առաջյալը) ավելացնում է, որ «Դուք բոլորդ հավատի մանուկներ եք»<sup>67</sup>, հայտնի է դաստում, որ աղանդավորների շամասիրությունը ջնձեց Արքահամի անվան հիշատակումը, քանզի առաջյալը հորդորում է, որ մենք հավատով Արքահամի մանուկներ լինենք, և նրան հիշատակելուց հետո մեզ անվանում է նաև հավատի մանուկներ: Սակայն ինչպես է ստացվում, որ մենք հավատի մանուկներ ենք դաստում, և ո՞ւմ հավատի, եթե ոչ Արքահամի: Քանի որ, «Հաւատաց Արքահամն Աստծուն, եւ այդ որպէս արդարութիւն համարուեց նրա համար»<sup>68</sup> և, քանի որ նոյն այդ պատճառով նա արժանացավ «ազգերի հայր» անվանը, մինչդեռ մենք, որ նման ենք նրան մեր հավատով առ Աստված, դոք շնորհիվ է, որ արդարացվել ենք, դոք շնորհիվ է նաև, որ կյանք ենք ստացել և այդ ժամանակից ապրում ենք նրա հավատով: Այս պատճառով նախորդ հասովածում, նա մեզ անվանում է Արքահամի որդիներ, քանզի նա մեր ընդհանուր հայրն է հավատի հանդեպ, և այսպիսով նա մեզ անվանում է նաև հավատի մանուկներ, քանզի բազում «ազգերի հայր» դատնալու համար Արքահամը պարտական է հավատի վերաբերյալ իր խոստմանը»<sup>69</sup>:

Ի տարբերություն Ափրիահատի, հոյս և լատին գրողները հիմնականում տարբերակում են երկու՝ Հին և նոր ովաները: Դրանց հակադրությունը վաղ մետինակների համար կարևոր թեմաներից էր: Նրանցից յուրաքանչյուրը, կարծես, իր պարտքն է համարել ընդհանակ մեկնություններով զննարկել սովոր հարցը: Մահրամասնորեն կանգ առնելով խնդրի վրա, օգոստինոսը տալիս է իր բացասրությունները.

«Սկզբուն երկու ովաներն եւ թաքցված էին և Աղամից, և Զույգիսկ Մովսեսից: Բայց Մովսեսի միջոցով է, որ ի հայտ եկավ Հին Ուխտը, և դոք մեջ թաքնված էր

<sup>64</sup> Ափրիահատ-Զօն, լ. 216-217:

<sup>65</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.7.59.1-I.7.59.2.

<sup>66</sup> Justin Martyr, Dialogus, chap. LXXX.

<sup>67</sup> Հմմպ. Գալատ. Գ 7 «Փիտիել՝ պարունակած է ի հասարաց անփի են, նորա և որդիք Արքահամու»:

<sup>68</sup> Ծննդ. ԺԵ 6, Ալ Ծոռ. Դ 3, Գալատ. Գ 6:

<sup>69</sup> Tertullian, Adversus Marcionem, V, ch. III, p. 435.

Նոր Ուխտը, որ գաղտնի լինելուց հետո, մարմավորվեց: Քանզի շուտով, երբ Տերն եկավ մարմնով, Նոր Ուխտը քողազերծվեց: Թեև Հին Ուխտի խորհրդականը կորան, բայց և այնպես, դրան հատուկ կարգադրությունները չանհետացան: Դրանք մինչև այժմ էլ պահանջում են նրանց կողմից, ովքեր, ըստ առաջալի, ծնվել են Նոր Ուխտի խորհրդի համաձայն, բայց, բնական<sup>70</sup> լինելով, դեռևս ընդունակ չեն Աստծու Հոգուց բխած ճշմարտություններն ընդունելու<sup>71</sup>: Քանզի, ինչպես որ Հին Ուխտի մեջ կային անձինք, ովքեր հոգևոր էին իրենց հաղորդությամբ և գաղտնաբար պատկանում էին Նոր Ուխտին (որն այն ժամանակ թաքնված էր), այնպես էլ հիմա, երբ Նոր Ուխտը բացահայտվեց, բազում են նրանք, ովքեր բնական են իրենց հաղորդությամբ: Եվ եթե նրանք չառաջադիմեն ստանալու համար Աստծու Հոգու ճշմարտությունները, որոնց մասին զգուշացնում է մեզ առաջալի թուղթը<sup>72</sup>, ապա նրանք, այնուամենայնիվ, կպատկանեն Հին Ուխտին»<sup>73</sup>:

Օգոստինոսը, քննարկելով աստվածաշնչային հատվածները Աքրահամի ուխտի վերաբերյալ, պարզորոշ նշում է «ուխտ» և «մանկունք» տերմինների կապը.

«Ապա իմացե՞ս է, որ ասված է. «այլ Խսահակա կոչեսցի թեզ զաւակ»<sup>74</sup>, երբ Աստված անվանում է նրանց նաև Խսահակի սերուն: Բացատրելով դա, առաջալն ասում է. «այլ Խսահակա կոչեսցի թեզ զաւակ», այսինքն՝ մարմնի որդիները չեն, որ Աստծու որդիներն են, այլ խստման որդիները<sup>75</sup> են համարվում սերուն, որովհետև խոստման մանուկները կարող են լինել միայն Աքրահամի սերնդից. Նրանք կոչվում են Խսահակի [սերունդ]<sup>76</sup>, այսինքն՝ նրանք շնորհի կոչումով են հավաքված միասին ի Քրիստոս»<sup>77</sup>:

«Խոստման որդիներ»-ը, այսինքն՝ «ուխտի մանուկներ»-ը, նրանք էին, ովքեր սերում էին Աքրահամից, Խսահակից, հետո էլ նրա որդի Հակոբից: Թեպետև Խսահակ Աքրահամի ավագ որդին էր, բայց նա «բնական» զավակ էր, ծնված մինչև Աքրահամի՝ Աստծու հետ ուխտ կապելը: Այս է պատճառը, որ Խսահակն է համարվում «խոստման կամ ուխտի» առաջին մանուկը<sup>78</sup>, որին փոխարինեց նրա կրտսեր որդի Հակոբը<sup>79</sup>: Նրանցից է, որ հե-

<sup>70</sup> Այսպէս էր կոչվում «հին», ոչ հոգևոր մարդոր, հմմտ. Ա Կորնթ. Բ 14, Ա Կորնթ. ԺԵ 46:

<sup>71</sup> Հմմտ. Ա Կորնթ. Բ 14:

<sup>72</sup> Երևի Օգոստինոսը նկատի ունի Պողոս առաքյալի «Առ Կորնթացիս» թուղթը, մասնավորապես, Բ զյուր, Ա Կորնթ. Ա 4-16:

<sup>73</sup> St. Augustine on Faith and Works, by Gregory J. Lombardo, 1988, Against the Donatists, I, chap. 15, 24.

<sup>74</sup> Առ Հոռո. Ձ 7-8 «Եւ ոչ որ զաւակն Աքրահամու նև՝ ամսներնան որդիի իցն. այլ Խսահակա կոչեսցի թեզ զաւակ: Վյսինք թէ: ոչ որ որդիի մարմնոցն նև՝ նև որդիի Վագունու, այլ՝ որդիի աւելքնացն համարին ի զաւակ:», հմմտ. ևան Երք. ԺԱ 18, «Որում ասացան, թէ՝ «Խսահակա կոչեսցի թեզ զաւակ»:

<sup>75</sup> «Խոստման որդիների» (որդիի աւելքնացն) կամ «ուխտի մանուկների» մասին փես Ծննդ. ԺԵ 1-6, ԺԷ 2-19, ԺԸ 9-15, ԽԱ 1-8: «Խոստում» բար այսպիսն լույս «ուխտ» նպան է:

<sup>76</sup> Հմմտ. Առ Հոռո. Ձ 7-8:

<sup>77</sup> St. Augustine, The City of God, Book XVI, chap. 32.

<sup>78</sup> Հմմտ. Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.21.3՝ որ Կղմնան Աղքաքանդացին ասում է, որ Խսահակի անունը (որը կրայինն է «ծիծաղող» և նշանակում է) կապվում է «մանուկ» բաժի հետ:

<sup>79</sup> «Հակոբ» կրայինն ինև «փոխարինող» և նշանակում:

տագայում սերում են բոլոր «ուխտի մանուկները», և նրանք են, փաստորեն, առաջին «մանկութագները»:

Վերը բերված օրինակներից Ակատեղի է «հմի» և «նորի» վերաբերյալ աշխալով քննարկում բոլոր աղբյուրներում: Դա վերաբերում է ոչ միայն Հին և Նոր ուխտերին, այլ ընդհանրապես: «հմի» և «նորի» առկայությամբ, հակադրությանը մեր թվարկության առաջին դարերում: «Հմի» և «նորի» համեմատությունն է արվում Հին և Նոր Կտորակարանների, մարդու, մանկանց, զաղակարների, Խոսքի, խորհուրդների միջև: «Նոր» մարդկանց մասին է գրում Կոնսես Սղեքսանորացին:

«Ի հակադրություն Բին մարդկանց Առ մարդիկ (ծ լած ծ կաւծ) անվանվում են երիտասարդներ և, սովորելով Առ օրինություններ, մենք այդ երիտասարդության մեջ ունենք ուժերի ծաղկման առավոտների հարստությունը, որին ծանոթ չէ հասակավորը.... Նրանք, ովքեր դարձել են Առ Խոսքի մասնակիցներ, պետք անպայմանորեն լինեն Առը»<sup>80</sup>:

Ավրահատը ևս խոսում է Բին և Առ մարդու մասին.

«Որ մերկանայ զմարդն Բին, մի դարձի անդրէն ի գործ իւր առաջին: Որ զգենու զմարդն Առ, պահեսցէ զանձն իւր յամենայն չարեաց»<sup>81</sup>:

Կյուրեղ Երուսաղեմացին, ընդհանրացնելով թեման, գրում է արդեռ Բին և Առ մարդկության հակադրության մասին.

«Մերկացարութ զիին մարդկութիւնն, որ ապականեցաւ ըստ ցանկութեան խարեւեան պատրանացն. զի զգենով մարթացեք խոստվանութեամբ զնոր մարդն, որ Առողջեցաւ ի Անանութիւն արարչին իւրոյ»<sup>82</sup>:

Նույն թեմաների շուրջ գրում են նաև Բայ Բեղիմակները: Այս առումով հատկանշական է Եզրիկ Կողրացու հետևյալ վկայությունը.

«Եւ յորժամ ի Հնում եւ ի Նորում զնոյն սպառնալիս և զնոյն խոստմուն բարութեանց գոտանեմք, ո՞չ ապաքէն յայտ յանդիման ցուցանի, թե մի տուիչ է Հնոյն եւ Նորոյս»<sup>83</sup>:

Հին մարդկության նորոգման մասին է վկայում և Ազաթանգեղոսը.

«Նորոգել Բրամալէ, եւ մերկանալ զիին մարդկութիւնն ի ձեռն մկրտութեան աւագանին»<sup>84</sup>:

Ի դես, ճախտորդ ճախտասարդումում Ազաթանգեղոսը խոսում է «մանկանց» մասին: Հիշենք նաև Ազաթանգեղոսի երկից մեջքերված հատվածը, որը քննարկվում են Առի և Բին հարաբերությունները<sup>85</sup>:

Բոլոր այս օրինակներում «Առ մարդիկ» արտահայտությունը, իմաստը և «մանկունք»-ը,

<sup>80</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.5.20.3-I.5.20.4.

<sup>81</sup> Ավրահակ-Զօս, էջ 111:

<sup>82</sup> Կյուրեղ Երուսաղեմացի, էջ 2, Cyrill Jer. Catecheses, p. 372:

<sup>83</sup> Եզրիկ Կողրացի, 1992, էջ 113, հմֆ. նաև էջ 112:

<sup>84</sup> Ազաթանգեղոս, Դայոց Պատմություն, Ա.Տիր-Ղևոնյան, Երևան 1983, էջ 246 (այսուհետև՝ Ազաթանգեղոս, 1983):

<sup>85</sup> Ազաթանգեղոս, 1983, էջ 336:

«քրիստոնյա» բառի մեկ այլ փոխարերությունն է: Ուստի, ըստ ամենայնի, «նոր մարդիկ» «մանուկներն» են: Որպես ասվածի ապացուց, կարելի է վկայակոչել մեկ այլ հատված «կոչումն Ընծալութեամ» գրքից, ուր, կրկին անդրադառնալով հյութին, կյուրեղ Երուսաղեմացին հայտարարում է:

«Եվ իսկապես, մենք «Աստծու մանուկներ» ենք, որ մի կողմ դնելով հին մարդուն և հանելով «զարդելիության զգեստը», «հազանք» Քրիստոսի անմահությունը, որպեսզի հարությամբ դառնանք նոր, սուրբ ժողովորդ և կարողանանք անեղծ պահել մարդուն: Եվ մանուկը, որպես Աստծու փոքրիկ, մաքրվել է շնությունից և աղտոտությունից»<sup>86</sup>:

«Նոր մարդիկ» են նաև Հոգածինոս Վկայի, Կիպրիանոսի և այլոց կողմից հիշատակված «հարության մանուկներ»-ը, քանզի մկրտությունը հին մարդու մահն է և նոր մարդու ծնունդը, ավելի ստույգ՝ հնից հառնելը: «Նոր»-ի գաղափարի հետ է կապված նաև «մանուկներին» չորացած հողում գտնվող արմատի հետ համեմատելը<sup>87</sup>:

«Եկեղեցու որդիները պետք է պաս պահեն և լինեն փոխազան (ժիր) աղոյքներում. նրանք պետք է հոգ տանեն աղքատների մասին և արդարություն պահանջեն ճնշվածների համար...»<sup>88</sup>:

«Մանուկ» և «ուխտ» եզրերով կազմված արտահայտությունների օրինակների ցանկը կարելի է ընդլայնել, սակայն բերվածներն ել բավարար են՝ պատկերացում կազմելու դրանց սկզբնավորման և զարգացման վերաբերյալ: Նկատելի է, որ «մանուկ» տերմինն ամենուրեք քննարկված է մինենույն թեմաների<sup>89</sup> կոնտեքստում: Դրանցից ամենակարևորը «հնի» և «նորի» հակադրությունն է: Առանձնակի կարևորություն է տրված Հին ու Նոր ուխտերին և դրանց հետ սերտորեն կապված Հին և Նոր Կտակարաններին: Այդ է վկայում Վերջիններիս հենց անվանումը: Այսինքն՝ «ուխտ» բառի բազմաթիվ նշանակությունների շարքում, երևի, պատահական չէ «Կտակարան» (ծրագրային) իմաստը: Ուստի Սուրբ Գրքի Հին և Նոր Կտակարան անվանումներն իմաստային առումով, թերևս, նույնն են, ինչ Հին ու Նոր ուխտերը: Բացի այդ, տեսանք, որ «Նոր Ուխտ» և «Նոր Կտակարան» բառակապակցությունները որոշ հեղինակների գործերում, կարծես, տարանջատված չեն: Թվում է նույնական, որ Նոր և Հին Կտակարաններն են մտնում «հնի» և «նորի» հակադրության շրջանակի մեջ: Համեմայն դեպք, հակադրման նման փորձեր արվում էին՝ դատելով Արքելայո-

<sup>86</sup> Clemens Alexandrinus, Paedagogus, I.6.32.4.

<sup>87</sup> Բաղդագիրում ասկա է Կիպրիանոսի նրկում («Մներ, որպես մանուկներ, որպես արմադ չորացած հողի մնջ, հայփարաքնիքը Նրա ներկայությամբ»՝ Cyprian, Testimonies II, 13), հմմդ. նաև Օրիգեննեն. «Մներ, որպես մանուկ, որպես արմադ չորացած հողի մնջ, զնկուցները Նրան» (Origenes, Contra Celsum, ed. M. Borret, Origene. Contre Celso, 4 vols. [Sources chrétiennes 132, 136, 147, 150. Paris: Cerf, 1:1967; 2:1968; 3-4:1969], 1.54.19 (այսուհետև՝ Origen, Contra Celsum): Նոյնը կրկնվում է նաև «Ընդհեմ Կելտոսի»՝ Contra Celsum 6. 75.18 և Հուստինոս Վկայի երկուում. «Մներ, որպես մանուկ, որպես արմադ չոր հողի մնջ հայփարաքնիքը Նրա առջև» (Justin Martyr, Apol. I, L):

<sup>88</sup> Վօծես, 1960, p. 39.

<sup>89</sup> Այդ թևաներն են՝ մարմնավորը, «սնուցում»-ը, Շովիփի («մանկափառք»-ի, մանկավարժի) առկայությունը, զիփությունը (ճշմարդությունը), «որդեսքորություն»-ը, «Ժատանգորդ»-ը, պատերազմը (սարանայի հնարք), «երկնային հարսանիք»-ը, «հին»-ը ու «նոր»-ը և այլն:

սի հետևյալ վկայությունից.

«Ես հասկանում եմ, որ նրա [Մագիի-Մ.Ը.] հիմնական ճպատակն էր ապացուցել, որ Մովսեսի օրենքը համաձայն չէ Քրիստոսի օրենքին և նա շանում էր այդ դրույթը հիմնավորել Սուրբ գրքերի և դժուակավորությամբ: Սակայն, մենք ոչ միայն հաստատեցինք Մովսեսի օրենքը, որտեղ ամեն ինչ գրված էր, այլև ապացուցեցինք, որ ողջ Հին Կտակարանը համաձայն է Նոր Կտակարանին ու կատարյալ ներդաշնակության մեջ է դրա հետ և, որ դրանք մի ամբողջություն են կազմում... Պարզապես, ճշմարտությունը հետևյալն է. ինչպես մենք ծիրանին տեսնում ենք հագուստի վրա, այնպես էլ, եթե կարելի է ասել, Հին Կտակարանի հենքի մեջ ճշմարտում ենք Նոր Կտակարանը, որպեսզի դրանում տեսնենք Տիրոջ փառքի արտացոլումը»<sup>90</sup>.

Հայտ իս, այստեղ քննարկվող հարցերի մեջ մասը ծագել է Նոր Կտակարանի խմբագրությամբ, քանզի բոլոր բերված օրինակները առնչվում են Նոր Կտակարանի հիմնական խորհրդների, ավելի ատուզ՝ Հին Կտակարանի համեմատությամբ փոփոխված նոր գաղափարախոսության հետ: 2-3-րդ դարերում Նոր Կտակարանը դեռևս վերջնականապես խմբագրված չէր: Թեպեսն Նոր Կտակարանը հիմնականում կանոնականացվեց 4-րդ դարուն, այնուամենայնիվ, այն դեռ միատարր չէր: Կանոնականացումը տևեց մինչև 7-8-րդ դարերը. այդ ողջ ընթացքում ակտիվորեն քննարկվում և մեկնարան վում էին Նոր Կտակարանը կազմող գրքերը:

Նկատենք, որ այստեղ քննարկված հեղինակների մեծամասնությունը ետանդուն մասնակցություն է ունեցել Նոր Կտակարանի կազմավորմանը: Նոր Կտակարանը քննական բնագրեր պատրաստելիս, պատրաստելիս, այսօր էլ մասնագետները դիմում են, օրինակ՝ Կողեմես Աղեքրսանդրացու, Տերտուլիանոսի, Կիպրիանոսի և այլոց մեկնարանությունների տարրներումներին:

Վաղ քրիստոնյա հեղինակները այլաբանություններ պարունակող Նոր Կտակարանի խորհրդները մեկնարանում էին ոչ պակաս փոխաբերական իմաստ ներմուծելով: Այս է պատճառը, որ հետագայում դավանաբանական ներհակ ուղղվածություն ունեցող Եկեղեցիների կողմից դրանք յուրովի են մեկնարանվել: Դրա հետևանքով է, որ «մանկունք» եղուր, ինչպես նաև խնդրո առարկա այլ տերմինները, կարծես, քողարկված են բարդ և ոչ միշտ միանշանակ մեկնարանվող խորհրդներով:

Թեև շարադրված նյութը բավականին խճճված է, և այս կամ այն հարցի իմաստը պարուրված է այլաբանական ու փոխաբերական գաղափարներով (ինչը հաճախ անհասկանալի է դարձնում այն), այնուամենայնիվ, փորձնենք որոշ եզրակացություններ ամեն և սահմանել խնդրո առարկա եզրերն ու բառակապակցությունները: Բոլոր հիշատակված արտահայտություններում «ուստի մանկունք», «ուստի մանկունք Եկեղեցւոյ» կամ «մանկունք Եկեղեցւոյ», «մանուկ» եղուր բաղադրիչ մաս է: Ուստի բոլոր այս բառակապակցություններում «մանուկ» եղուր հիմնական կապակցող տերմինն է: Առաջին հերթին տարբերակվում են երկու «մանկունք»՝ Հին ու Նոր Կտակարանի: Նրանց միջև կան ընդհանրություններ

(Կարևորագույնն այն է, որ երկուսն էլ «հավատի մանկունք» են) և տարբերություններ, որոնք թվարկելու կարիքը չի զգացվում, քանզի դրանք պարզ տեսանելի են երկու հոդվածներից: Սակայն կանգ առնենք ոչ այնքան բացահայտ մեկ ընդհանրության վրա:

Խոսելով Հին Կտակարանի «մանկանց» մասին, ճշվեց, որ հրեաներից ոչ բոլորը կարող են կոչվել այդպես: Նրանք պետք է անպայմանորեն լինեն ոչ միայն Աքրահամի, այլև Իսահակի սերմոհից, այսինքն՝ այն ճյուղից, որը սկիզբ էր առել Աքրահամի՝ Աստծու հետ ուստ կնքելուց հետո: Այդ գիծը շարունակում էին ոչ թե Իսահակի բոլոր որդիները, այլ միայն կրտսերը՝ Հակոբը: Այստեղ ակնհայտ է «ընտրյալի» գաղափարը, ինչը ճշանակում է, որ «մանկունք» եզրը և կրում է այդ տրամաբանությունը:

«Ընտրյալի» նույն գաղափարը տեսանելի է և նոր Կտակարանի «մանկանց» դեպքում, քանզի այդ տերմինով կոչվում էին որոշակի բնութագիր, հատկանիշներ ունեցողները: Ասվածին կարելի է առարկել գոյություն ունեցող այն տեղեկություններով, որոնց համաձայն «մանկունք» են անվանվում բոլոր վաղ քրիստոնյաները: Սակայն այս դեպքում էլ չպետք է մոռանալ, որ այն ժամանակ, երբ քրիստոնեությունը դեռևս համատարած չէր, այդ քրիստոնյաներն ել են հանդես գալիս «Ընտրյալի» դերում և նույնիսկ հետապնդվում: Համաձայն որոշակի կանոնների, քանզի ել են ապրում համայնքներով: Նշենք նաև, որ «մանկունք» բաղադրիչը, բացի հիշատակված «Աստված», «Աքրահամ», «փոստում», «ուխտ» բառերից, հանդիպում է «հարավել», «Սիոն»<sup>91</sup>, «Լուս» և այլ եզրերի հետ:

Խնդրու առարկա արտահայտություններից յուրաքանչյուրը հասկանալու համար հարկ է սահմանել «մանուկ» եզրը՝ օգտագործելով ոչ միայն վաղ հետինակաների տեղեկությունները, այլև Հովհաննես Երզնկացու խրատի տվյալները: Կարելի է առարկել, որ «Խրատ»-ը ավելի ուշ շրջանի աղբյուր է, որի տեղեկությունները չպետք է քննարկվեն վաղ աղբյուրների տվյալների հետ նույն տեսանկյունից: Սակայն դա միակ աղբյուրն է, որում թեման ուսումնահիրվում է ոչ թե հայացիկորեն, այլ նվիրված է հենց մեզ հետաքրքրող խնդիրներին: Հիշենք, որ թեև 5-6-րդ դարերից հետո որոշ վկայություններ առկա են տարբեր երկրում, սակայն քննարկվող հյութի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայ հետինակաները, լինելով ավանդապահ դավանաբանական հարցերում, շանացել են պահպանել խնդիրի սկզբնական մուտքումը: Ուստի 13-14-րդ դարերում վաղ քրիստոնեության շրջանի գաղափարներ արտահայտող հայկական երկերի կամ եզրերի առկայությունը այդքան էլ անսովոր չէ: Այդ պատճառով է, որ Հովհաննես Երզնկացու «Խրատին» մեծ նշանակություն է հատկացվում խնդրու առարկա արտահայտությունների ընկալման համար:

Այսպիսով, «մանուկ» բառը որոշակի հատկանիշներ ունեցող անձանց մատնանշող տեխնիկական հաստուկ տերմին է: Վաղ շրջանի գրեթե բոլոր վերոհիշյալ տեքստերի օրինակներում «մանկունք» եզրը, մեծ մասամբ, կիրառված է հնչեան Եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ «քրիստոնյաներին» բնութագրելու համար, որոնք «առաջնորդվում էին բարե-

<sup>91</sup> «Հայկական աղբյուրներում լուսակացնելու համար այդ բառակապակցությունները, գլուխ օրինակ՝ «Ի հարցն մագրեսագրեցած մանաւանդաւան թերթեամբ. առ նոսա առաքեսցոր զերրախնդիր աշխարհաւոր համբակս Սիոնի», ՆԲՀՀ, լ. 455:

պաշտ պարզամտությամբ»<sup>92</sup>: «Մանկումք»-ը, որպես բոլոր վաղ քրիստոնյամերի անվանում, հիմնականում վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ քրիստոնեությունը դեռևս համընդհանուր չէր և նույնիսկ հետապնդվում էր: Այդ շրջանում քրիստոնյա «մանուկ»-մերն ապրում էին համայնքներով՝ առաջնորդվելով որոշակի կանոնակրոպ:

«Աստծու արքայությունը փոքրինն է»<sup>93</sup> - հայտարարում է նոր Կտակարանը: «Փոքրը» վերաբերում է մանուկներին: Աստծու հետ նոր ովստ կճած նոր մարդկանց, որոնք ոչ թե «մարմնի իշխանութեան» տակ են, այլ՝ «հոգով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ»<sup>94</sup>: «Մանուկները» ոգով և մարմնով պետք է մաքոր լինեն, ուստի ցանկալի է, որ նրանք չամուսնանան, սակայն եթեն դա ամբոնար է; թող ամուսնանան ըստ օրենքի և պահպամն ամուսնության մաքորվյունը: «Մանուկները» հաստոկ վերաբերմունք ունեն գիտության մկատմամբ, առանձնապես Սուրբ Գրքի: Նրանք պարզամիտ են ու «ժիր», պետք է սնվեն «կաթով», մեջքերը կապեն գտտիով, Օման են «չորացած հողի մեջ գտնվող արմատի»<sup>95</sup>, «Բավասար են Աստծու հրեշտակներին»: Նրանք պետք է նմանվեն Տիրոջ գալստյանը արյուն սպասող ծառամերի: Նրանք խաղաղաւեր են և պետք է ըստրեն «մեղ և ուրբ» ծանապարհներ: Միաժամանակ նրանք Քրիստոսի զինվորներն են, որոնք քաջ և ամպարտ են մնում սատպանայի դեմ մղվող պատերազմում:

Երգմկացու խրատից վերադապնուկ դեպի տերմինի ակունքները, կարելի է առաջարկել «մանկունք» եզրի գաղափարական հիմքի հետևյալ ուրվագիծը: Կարծում ենք, որ «Խրատ»-ում բննարկվող «մանկունք»-ը և «Զգօն» գրքում վկայված եար Q'յամմ-ն նույն տերմիններն են: Դրանք, իրենց մերժին, կապված են հունական և լատինական աղբյուրներում առկա եզրի հետ, որը հիմնականում վերցրած է դեռևս վերջնականապես չխմբագրված Նոր Կտակարանից: Այստեղ օգտագործված «մանկունք» եզրն առնչվում է Քումրամի համայնքում ընդունված և Հին Կտակարամից սեղող "թ'յոմ" (կոքր, հիմար) բառի հետ: Միևնույն ժամանակ դրամցից յուրաքանչյուրը կրում է իր դարաշրջանին և երկրին բնորոշ առանձնահատկությունները:

Արդ. ի՞նչ են նշանակում առանձին վերցրած «ովստի մանկունք», «ովստի մանկունք Եկեղեցւոյ» կամ «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունները: Այս հարցին հնարավոր է պատասխանել, հիմնականում հենվելով հայկական և ասորական Այութի վրա: Վաղ քրիստոնեական աշխարհում «ովստ» բառով կոչում էին օսկ հավատացյաներին՝ համացքի քրիստոնյամերին<sup>96</sup>: Ինչպես արդարացիորեն նշում է Մյուրելը, այդ ժամանակ «ովստ» եզրի տակ հասկացվում էր «Եկեղեցին Եկեղեցու ներսում»<sup>97</sup>: Ասկածին կարելի է հավելել՝ այն «Եկեղեցին Եկեղեցու ներսում», որը ներառում էր տվյալ քրիստոնեական համացքի

<sup>92</sup> Papias, Fragmenta.

<sup>93</sup> Մարք. ԺՀ 3՝ «Եթէ ոչ դարձիք և լինիցիք իբրև զմանկիք, ոչ միանիցիք յարքայոթին երկնից», հմմդ. նաև Մարք. ԺՀ 14, Ղոկ. ԺՀ 15:

<sup>94</sup> Առ Հոռոմ. Ը 9:

<sup>95</sup> Մյուրելը (Murray, 1975, p. 198-199) նշում է, որ հնեանոս ժողովուրդները խորհրդանշում էին չորացած հող, սահման: Ուրիմ, այսպէս լի «մանուկները» այլարամորին «արմագ» և կոչվում և խորհրդանշում են նոր կյանքը չորացած հողի վրա:

<sup>96</sup> Sl's Ձերիյան, 1990, լ. 48:

<sup>97</sup> "the church within Church" - Murray, 1975, 13-14.

բոլոր (թե՛ կղերական, թե՛ աշխարհական) դասերը: Այսպիսով, «ուստ Եկեղեցւոյ»-ը<sup>98</sup> ավելի լայն եզր է և դրա տակ պետք է հասկանալ տվյալ տարածքի ողջ քրիստոնյա համայնքը: Դրանց թվում էին նրանք, ովքեր ապրում էին ըստ «մանուկների» կանոնների և «միաբան» էին այդ օրենքների նկատմամբ: Ուստի և՝ «ուստի մանկունք», և՝ «ուստի մանկունք Եկեղեցւոյ», և՝ «մանկունք Եկեղեցւոյ» բառակապակցությունները ընդգրկվում են «ուստ» հասկացության մեջ: Այսպիսով, «ուստավորներ» տերմինն ավելի լայն իմաստ ունի, քան բոլոր հիշատակված բառակապակցությունները<sup>99</sup>:

Իր հերթին, «ուստի մանուկ»-ների շարքում կային կղերականներ, որոնք վկայված էին երկու՝ «ուստի մանկունք Եկեղեցւոյ» կամ «մանկունք Եկեղեցւոյ» անուններով, որոնք սակայն մատունացում էին մինառու դասը: Դեռ մինչև վերջ պարզված չեն այն էական գաղափարները և դոկտրինները, որոնք ներառում է «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունը: Սակայն կարելի է զատել որոշ հատկանիշներ և անել հետևյալ եզրահանգումները: Պարզ է, որ այդ խմբի անդամները, հոգևորական լինելուց բացի, «մանուկ» էին, այսինքն՝ ունեին սահմանված առաքինություններ և յուրահատկություններ, որոնք բնորոշ էին խիստ օրենքներով ապրող «մանուկներին»: «Մանկունք» եզրով կազմված այլ արտահայտությունների շարքում սրանք ավելի ուշ են կազմավորվել և սակավ են վկայված վաղ տեքստերում: Այդուհանդեռձ, «մանկունք Եկեղեցւոյ» արտահայտությունը գոյություն է ունեցել արդեն 4-րդ դ., իսկ դրանից առաջ նկատելի են դրա ձևավորման որոշ հետքերը:

Ի տարբերություն այլալեզու բնագրերի, արտահայտությունը լայնորեն կիրառված է հայկական աղբյուրներում: Որքանով կարելի է դատել առկա տեղեկություններից, «մանկունք Եկեղեցւոյ» խմբին պատկանող կղերականները Եկեղեցական մեծ պաշտոններ չեն զբաղեցնում. ըստ Երգմանու՝ նրանք քահանաներ և սարկավագներ էին: Այնուամենամինչ, «մանկունք Եկեղեցւոյ»-ն ինչ-որ չափով ընտրյալ դաս էին կազմում. նրանց համար էին նախատեսված քոլորին ոչ հասու բազմազան գրվածքներ, նրանց էին անվանում «սուրբ մանկունք Եկեղեցւոյ, հիեշտակերամ լուսաձիր դասք կրօնաւորաց»<sup>100</sup>: Բառակապակցությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. «մանկունք Եկեղեցւոյ»-ն կրոնավորների հասուն դաս էր, որը կրում էր «մանուկներին» բնորոշ առանձնահատկություններ և կենցաղավարում էր որոշակի առաքինությունների, բավականին խիստ կամունների համաձայն:

Պետք է զատորոշել երկու՝ «ուստի մանկունք» և «ուստի մանկունք Եկեղեցւոյ» (կամ «մանկունք Եկեղեցւոյ») խմբերը: Առաջին խմբում ընդգրկվում էին ինչպես աշխարհական, այնպես էլ կրոնավոր անձինք, որոնք ապրում և գործում էին համաձայն «մանկանց»

<sup>98</sup> Խորովվիկ փախս է հետևյալ բացարրությունը «ուստի» եզրի վերաբերյալ. «Ուստիս ասէ, որ սաք բահանայականին վիճակնազ են» կամ «Ուստի ասելով Եկեղեցւոյ, զի ամններին նուիրնազ են ի սպասարորթին և ի կարգադրութիւն Եկեղեցւոյ» խոր. մմ. և պարզ, հմմթ. նաև «Սնդընսպրոսի փարքի» հայերներ թարգմանության մեջ առկա օրինակները, Սուկրափ, լ.ջ 721 (առևտ զուստ Եկեղեցւոյն), նաև Կաղանկապրվացի, լ.ջ 26 «և յամննայն սուրբ ուժիվ Եկեղեցւոյ»:

<sup>99</sup> Ուստի bar Q'յամմ-ն չի կարող «ուստիավոր» բառի հոմանիշ համարվել, ինչպես համոզված է Զ. Նեդունցափը (G. Nedungatt, The Covenanters of the Early Syriac-Speaking Church, OCP, vol. 39, fasc. 1, Roma 1973, pp. 191-215; 420-444., p. 203):

<sup>100</sup> Կիրակոս Դրազարկցու Մնկնութիւն Ցովիաննու Անդարանին, Յ. Օսկերերանի, Կ.Պոլիս 1717, լ.ջ 962:

պատգամների: Մինչդեռ երկրորդ արտահայտությունը կիրավում է բացառապես հոգևորականների հատուկ դասի մկանամբ: Տարբերակումն ակնհայտ է, առաջին հերթին Եկեղեցական կանոններում, որտեղ այս խմբերը հիշատակվում են առանձին: Այդ են վկայում ան «Դարպապի հրահանգմեր»-ը<sup>101</sup>:

Այսպիսվ՝ «մանուկ» բառը հատուկ, տեխնիկական տերմին է: Դրանով են սքողվել վաղ քրիստոնեության զաղափարախոսությունը, Բիթնականում արևելյան Եկեղեցիների վարդապետությունն ու կանոնները, որոնք, հավամարար, ընդհանուր են եղել վաղ՝ նախական, ընդհանրական Եկեղեցու համար: Արդ, ճայկական աղյուրները լրացուցիչ տեղեկություններ են պարունակում քննարկվող եզրերի վերաբերյալ, որոնք ճապատում են կարևոր թեմաների և ոչ ակնհայտ աղերսների ուսումնակիրմանը. օրինակ, տվյալ դեպքում հայկական հյութը է, որ ինչ-որ չափով լույս է ափում «մանուկ» բարդ եզրի առանձնահատկությունների և իմաստի վրա:

Վերջում, մեկ անգամ ևս նշենք, որ Աերկայացված եզրահանգումները, ավելի խորը մետագուման կարիք ունեցող «մանկումք» թեմայի, ուսումնասիրության միայն այս փոփի արդյունքներն են:

<sup>101</sup> F. C. Burkitt, Early Eastern Christianity, London 1904, p. 143-148, Vəðbus, 1960, pp. 34-50.